

ՀՏԴ: 929:947.925 Ազաթանգեղոս

DOI: 10.54503/0135-0536-2026.1-3

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ» ՍՏԵՂԾՄԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ-ԿՐՈՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ\*

### ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

*Բանալի բառեր՝ Ազաթանգեղոս, «Հայոց պատմություն», քաղաքական օրակարգ, կրոնական իրավիճակ, ազգային ինքնություն, զինվորական խավ, եկեղեցու իշխանություն, Աստվածաշնչի թարգմանություն:*

#### Ամփոփում

Հայ քաղաքական միտքը IV–V դարերի սահմանագլխին ձևակերպեց ազգային (աշխարհիկ ու հոգևոր) իշխանության պահպանման օրակարգ՝ դրա լուծման միջոցը համարելով քրիստոնեության լիակատար ու վերջնական տարածումը, այն ջերմեռանդ հավատի, հայ մարդու ինքնության առանցքի վերածումը:

Ըստ Ազաթանգեղոսի «Հայոց պատմության»՝ IV դարի սկզբին Տրդատ Գ թագավորի և Գրիգոր Լուսավորչի ջանքերով քրիստոնեությունն ընդունվել, լիակատար տարածվել ու արմատավորվել է ամբողջ երկրով մեկ: Մինչդեռ V դարի պատմիչները բոլորովին այլ պատկեր են ներկայացնում՝ համարելով, որ նոր կրոնի տարածումը խիստ մակերեսային էր, իսկ դրա պատճառը Աստվածաշունչը հայերենով չունենալն էր: Իրականում նաև այլ, ավելի լուրջ խոչընդոտներ են եղել նոր կրոնի տարածման և արմատավորման ճանապարհին, որոնց մասին պատմիչները լռում են կամ նրանց տեղեկությունները անուղղակի են:

Շուրջ 600-ամյա անկախ պետականության ընթացքում հայաստանյան հասարակությունը բնորոշվում է լեզվական ընդհանրության առանձնահատկությամբ: Մի այլ առանցքային բաղադրիչի՝ ավանդական հեթանոսական կրոնի հետ դա պիտի պայմանավորեր նաև ընդհանուր սովորությունների, աշխարհընկալման, ընդհուպ՝ միանման կենցաղի գոյացումը: Երկրորդ առանձնահատկությունը հայաստանյան հասարակության մեջ ազատ բնակչության բացարձակ մեծամասնությունն էր: Երրորդը՝ զինվորական զբաղմունքի խիստ հարգի լինելու պարագան՝ կոշտ կյանք, կայուն մտածելակերպ ենթադրող, և դժվարությամբ փոփոխության տրվող զինվորականության մեծ տեսակարար

\* Ներկայացվել է 20. XII. 2025 թ., գրախոսվել է 01. II. 2026 թ., ընդունվել է տպագրության 20. III. 2026 թ.:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

կշիռը՝ ազնվականության գլխավորությամբ: Այդ ամենի վրա հենվող ընդհանրական արժեհամակարգը, որպես ազգային ինքնության հիմք, բնական ու լուրջ խոչընդոտ էր նոր կրոնի ճանապարհին:

Հայ քաղաքական միտքը այս հանգամանքների գիտակցմամբ ու մեկդարյա սակավ արդյունավետ փորձով Աստվածաշնչի (նաև կրոնական այլ գրականության) թարգմանությունը բավարար չի համարել նոր կրոնի դեմ եղած խոչընդոտների հաղթահարման, քաղաքական հիմնական խնդրի լուծման համար: Համազգային քաղաքական օրակարգի մեկնակետից ու տրամաբանությամբ՝ Ազաթանգեղոսի Պատմությունը գործնական առաջնահերթություն պետք է ունենար քրիստոնեության դեմ ծառայած խոչընդոտները հաղթահարելու, նրա համար արդյունավետ քարոզչության ճանապարհ հարթելու գործում: Ըստ այդմ՝ այն պետք է մտահղացված լիներ դեռ գրերի ստեղծումից առաջ ու ստեղծված՝ առնվազն Աստվածաշնչի թարգմանությանը զուգահեռ:

### *Նախաբան*

Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև Հայաստանի երկու մասի բաժանվելուց հետո (387 թ.), ու քիչ անց բյուզանդական մասում թագավորության վերացման (389 թ.), իսկ պարսկական մասում սպասվող նման մի հեռանկարի հանդիման, երկիրը հայտնվել էր ազգային իշխանության կորստյան ճակատագրական մարտահրավերի առջև: Հայաստանի՝ ավանդաբար ունեցած միասնական պետական իշխանության հետ մեկտեղ վտանգված էր նաև քրիստոնեական եկեղեցու հոգևոր իշխանությունը<sup>1</sup>: Վերջինս վտանգված էր երկակի՝ ունեցած ինքնիշխանության կորստի, և առաջին հերթին՝ զսպված, բայց չհաղթահարված, դեռևս կենսունակ հեթանոսության վերականգնմամբ եկեղեցու իշխանության օբյեկտ «հոգևոր հոտի» տարրալուծման, քայքայման հեռանկարներով: Այս պայմաններում անհրաժեշտ էր հաղթահարել հայաստանյան հասարակության մեջ նոր կրոնի նկատմամբ եղած ներքին խոչընդոտները, դեռ միայն պաշտոնապես ու ձևական ընդունված քրիստոնեությունը դարձնել հայ հանրության ազգային ինքնության անկապտելի առանցքային հատկանիշ: Դա նպաստող, բայց դեռ բավարար պայման չէր լինի սասանված միասնական թագավորական իշխանության վերականգնման ու պահպանման համար, սակայն բավարար կարող էր լինել Հայ եկեղեցու հոգևոր իշխանության ապահովման գործում, մանավանդ այլ միջոց պարզապես գոյություն չունեին:

Ոսկեդարյան հայ մատենագրությունը՝ թարգմանական թե ինքնուրույն, ստեղծված նախապես կազմված և ընթացքում լրացվող համապարփակ ծրագրով<sup>2</sup>, սպասարկել է ազգային իշխանության պահպանման ճակատագրորեն կենսական դարձած քաղաքական օրակարգը: Միայն իշխանության համար պայքարի հարթության վրա կարող է բացատրելի լինել հսկայական ծախսեր

<sup>1</sup> Ամբողջ IV դարում թագավորական իշխանության «հովանոցն» էր ապահովել Հայոց եկեղեցու կայացումը և զսպել նման վտանգների առարկայացումը (հիմնավորումները տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 2024թ, 64):

<sup>2</sup> Մանրամասները տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 2024թ, 48–56:

ու ջանքեր ենթադրող նման մի ծրագրի մտահղացումը և իրագործումը<sup>3</sup>: Ոսկեդարյան մի քանի տասնյակ մատենագրական (թարգմանական և ինքնուրույն) հուշարձաններից յուրաքանչյուրը համապարփակ այս ծրագրի իրականացման գործում յուրատեսակ մի սեկտոր է ծածկել, առանձին մի հարց լուծել՝ ի վերջո հասնելով տվյալ քաղաքական խնդրի վերջնական լուծմանը:

Ժամանակի անմխիթար կրոնական իրավիճակի, հայ հասարակության ազգային, սոցիալական կառուցվածքի առանձնահատկությունների հետ կապված իրողությունների համատեքստում ակնհայտ է դառնում, որ քրիստոնեական հավատի լիակատար տարածման և ամրապնդման հրատապ քաղաքական խնդրում ամենամեծ ծանրաբեռնվածությունը ու վճռական դերը պիտի ունենար Ագաթանգեղոսի «Հայոց պատմությունը»: Համազգային քաղաքական օրակարգի մեկնակետից այս գործի դիտարկումը, դրան տրված տեղի, հատկացված դերի, ստեղծման շարժառիթների, նպատակի պարզումը կարող է նաև թվագրման ու ստեղծման այլ հանգամանքների որոշակիացման վստահելի հիմք հանդիսանալ:

#### Լեզվական խնդիրը

Ագաթանգեղոսի պատումով՝ Հայաստանում քրիստոնեության ամբողջական ու վերջնական տարածումը, ըստ էության, որպես հեղափոխական ակտ է ներկայանում, մի հաղթարշավ՝ իրականացված կարճ ժամանակում Գրիգոր Լուսավորչի գլխավորությամբ (Վիրապից դուրս գալուց հետո) և Տրդատ թագավորի աջակցությամբ: Մյուս պատմիչները, ուղղակի չհակադրվելով հանդերձ այս արձանագրմանը, կրոնական իրավիճակի բոլորովին այլ՝ խիստ անմխիթար պատկեր են ներկայացնում հաջորդած մեկ դարի համար:

Ընդհանրապես, բնական է, որ ամեն մի նորի հաստատվելը դիմադրության է հանդիպում: Նույնը պետք է լիներ նաև քրիստոնեության դեպքում: Առավել ևս, երբ վերջինս ոչ թե եղածի կողքին, այլ նրա փոխարեն հաստատվելու, այն բացառելու հավակնություն ուներ, ուստիև հնի, ավանդականի դիմադրությունը առավելագույնը պետք է լիներ: Եվ դա ոչ միայն հոգևոր իշխանություն կրող շահագրգիռ կրոնական կառույցների (հեթանոսական և քրիստոնեական), այլ նաև հասարակության յուրաքանչյուր անհատի ազատությունների, մտածողության, ունեցած արժեքային համակարգի, ընդհուպ՝ կենցաղի մակարդակում:

Պատմիչների համերաշխ վկայությունները քրիստոնեության մակերեսային տարածման մասին, ըստ էության, վերաբերում են ամբողջ IV դարին, մասնավորաբար՝ IV–V դարերի սահմանագլխին: Նրանք նույնպիսի համերաշխությամբ այդ վիճակի համար որպես միակ պատճառ մատնանշում են Աստվածաշնչի հայերեն թարգմանության բացակայությունը: Եվ դա, ընդհանուր առմամբ, բնական է. քրիստոնեությունը գրավոր վարդապետություն էր և չէր կարող

<sup>3</sup> Այդպիսի վտանգ չկար, օրինակ, Բյուզանդիայում, որտեղ ապահով պետական իշխանության պայմաններում քրիստոնեության տարածումն ընթացավ աստիճանական, շուրջ մեկուկեսդարյա գործընթացով՝ առանց արտակարգ, «հեղափոխական» քայլերի ու նման ջանքերի (տե՛ս Ս ա ր գ ս յ ա ն. 2024ա, 41–44):

հենվել բանավոր պատմությունների, ավանդությունների վրա, ոչ էլ ներկայանալ նյութական առարկաների՝ կուռքերի, պատկերների, արձանների տեսքով, տարածվել միայն բերանացի: Հիմնական, սկզբի համար առաջնային «դասագիրքը», բնականաբար, պետք է լիներ Աստվածաշունչը՝ Հին և Նոր կտակարաններով: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը չուղեկցվեց հայերենի համար գրերի ստեղծմամբ: Գրավոր լեզուն ասորերենն ու հունարենն էին, և այդ լեզուներով էին եկեղեցիներում կատարվում քարոզները, արարողությունները, ինչը դժվարամարս պիտի լիներ, եթե անգամ այն ուղքի վրա բանավոր թարգմանվեր: Այսպիսին են ժամանակի պատմիչների համերաշխ վկայությունները ինչպես քարոզչության ու պաշտամունքի լեզվի, այնպես էլ շատերի համար դրա անհասկանալի լինելու պատճառների մասին:

Լեզվական խոչընդոտի հանգամանքին վերաբերող ամենապերճախոս վկայությունը Բուզանդինն է. «Որովհետև վաղուց ի վեր, երբ նրանք քրիստոնյա անունն ստացան՝ այդ (կրոնը) հանձն առան հարկադրաբար՝ իբրև մի մարդկային մոլորություն, առանց ջերմեռանդ հավատի: /Կրոնն ընդունեցին/ ոչ գիտակցաբար, հույսով ու հավատով, ինչպես որ հարկն էր: Միայն քչերը, որոնք փոքր ի շատե ծանոթ էին հունական կամ ասորի գրագիտության, մասամբ հասկանում էին այդ (կրոնը): Իսկ որոնք գրագիտության արվեստից զուրկ էին, այսինքն՝ ժողովրդի՝ նախարարների ու շինականների խառնիճադանջ բազմությունը – եթե ուսուցիչները նստելով գիշեր-ցերեկ ամպերի նման ուսումը ինչպես հորդ անձրև նրանց վրա հոսեցնեին, նրանցից ոչ մեկը ոչ մի խոսք, ոչ կես խոսք, ոչ մի բան, ոչ մի նշույլ իրենց լսածներից չէին կարող մտքում պահել կամ հասկանալ»<sup>4</sup>:

Մյուս պատմիչների (Խորենացի, Փարպեցի, Կորյուն) նույնաբովանդակ արձանագրումներից<sup>5</sup> ևս այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե, կարծես, նախընթաց մեկդարյա շրջանում որևէ մեկը չի տեսել կամ չէր կարող տեսնել, որ խնդրի լուծման բանալին պետք է լիներ հայոց գրերի ստեղծումը, միջոցը՝ օտարալեզու կրթական համակարգն ազգային լեզվով դարձնելը, Աստվածաշնչից սկսած՝ քարոզչական նյութերը, անհրաժեշտ այլ գրականությունը թարգմանելը, եկեղեցիներում ասորերենը և հունարենը հայերենով փոխարինելը: Սա այն եզրահանգումը չէր, անշուշտ, որին կարելի էր գալ միայն հարյուր տարի հետո, ինչպես պատմիչներն են դա մատուցում՝ նույնիսկ դա որպես մտքի յուրատեսակ մի գյուտ<sup>6</sup> ներկայացնելով: Դրանք այն խնդիրներն էին, որոնք պետք

<sup>4</sup> Բ ու զ ա ն դ. 1968, 91:

<sup>5</sup> Տե՛ս Խ ո Ր Ե Ն ա ց ի. 1991, 317, Ղազարայ Փարպեցույ Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան. 1904, 13, 16, Կ ո Ր Յ ու ն. 1941, 40:

<sup>6</sup> Կորյունը այդ «գյուտը»՝ որպես Մաշտոցի ներկայացրած խնդրի («հոգսի») պատասխան, վերագրում է «երանելի միաբանյալների աշխարհահոգ խորհրդին» (Կ ո Ր Յ ու ն. 1941, 42): Մովսես Խորենացին գրերի ստեղծման գաղափարը հստակ վերագրում է անձամբ Մաշտոցին (Խ ո Ր Ե Ն ա ց ի. 1991, 317): Արդի պատմագիտությունը, շրջանցելով քրիստոնեության ընդունման հետ նաև գրերի ստեղծման

է գիտակցվեին ու ձևակերպվեին քրիստոնեությունը պետական կրոն դարձնելու դեռ նախապատրաստական շրջանում, էլ չասած՝ այդ քայլը կատարելուց անմիջապես հետո: Առ այդ իրավացիորեն իր տարակուսանքն է հայտնում Ղևոնդ Ալիշանը. «Գուցե այն ատենէն ոմանք փորձեցին որևէ ձևով կամ կերպով՝ հայերէն կարդալու, գրելու հնարք կամ օտար լեզուաց տառերով գրել հայերէնն, վասն զի անկարելի թուի՝ թէ ամբողջ դար մի ժամանակի, ի Լուսաւորչէն մինչև իր թոռան թոռն թարգմանիչ Ս. Սահակ՝ մէկն մտածած չլայ այդպիսի բան մի ռամիկ ժողովրդեան հոգևոր օգտին համար, թող զուսումնականն»<sup>7</sup>: Եվ իրոք՝ այլ ժողովուրդներ, որպէս կանոն, այդպէս են վարվել քրիստոնեությունը որպէս պետական կրոն ընդունելիս<sup>8</sup>: Մեր՝ առաջինը լինելու հանգամանքն այս դեպքում բավարար արդարացում, բացատրություն չի կարող լինել, քանի որ խնդիրը ոչ թե փորձի ու փորձառության, այլ պարզ տրամաբանության ու ակնհայտ տեսանելիության հարթության վրա էր: Պարզապէս, ժամանակի հայ քաղաքական միտքը, որոշակի իրողությունների հիմքով արած բացատրելի հաշվարկներով, չի տեսել դրա գործնական անհրաժեշտությունը<sup>9</sup>:

Այսինքն՝ եթե պատմիչները հավաստի և ճշգրիտ են IV–V դարերի սահմանազլխին Հայաստանի անմխիթար կրոնական իրավիճակի և այն շտկելու միջոցների հարցերում, ապա, գիտակցված թե ոչ, չափազանցում են լեզվական խնդիրը՝ այն քրիստոնեության արմատավորման համար որպէս միակ խոչընդոտ համարելով: Դրանով, գիտակցված թե ոչ, նաև բացարձակացվում է Աստվածաշնչի դերն ընդհանրապէս:

Մայրենի լեզվով Աստվածաշունչը և դավանական այլ ձեռնարկներ ունենալը, հայերենով ուսուցումն ու քարոզչության ապահովումն անհրաժեշտ, բայց նաև բավարար պայման չէր կարող լինել քրիստոնեության լիակատար ու վերջնական տարածման խնդրի լուծման համար: Հայաստանում լեզվական անհարմարության կողքին, որպէս առանձնահատկություն, կային ավելի կարևոր

օրինաչափ պահանջի հարցը, մի դեպքում՝ համարում է, որ հենց «IV դարի վերջերին էր հայկական գրերի ստեղծումը դարձել անհետաձգելի անհրաժեշտություն» (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. 1984, 423), մյուս դեպքում՝ այդ «անհրաժեշտությունը» դիտարկվում է որպէս նույն շրջանում առաջացած «խայտաբղետ գրային իրավիճակի» հաղթահարման տեխնիկական մի խնդիր (Հայոց պատմություն. 2018, 501):

<sup>7</sup> Ալիշան. 1920, 206–207:

<sup>8</sup> Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությանը վերաբերող իր ուսումնասիրության մեջ դա օրինաչափ անհրաժեշտություն է համարում Մետրոպոլիտ Տեր-Մովսիսյանը՝ մատնանշելով մասնավորապէս գոթերի և սլավոնների օրինակը (տե՛ս Տէր-Մովսիսյան. 2018, 38):

<sup>9</sup> Այլ առիթով մենք որպէս դրա բացատրություն առաջ ենք քաշել այսպիսի դրոյթ. անկախ ու միասնական ազգային պետության հովանու տակ՝ եկեղեցին իր իշխանությանը սպառնացող ներքին և արտաքին լուրջ վտանգներ չի տեսել, ուստիև նոր կրոնի աստիճանական, անցնում տարածման ընթացքը կտրուկ արագացնելու, ջանքեր ու ծախսեր ենթադրող քայլերի ու միջոցառումների չի դիմել (տե՛ս Սարգսյան. 2024բ, 64):

խոչընդոտող օբյեկտիվ հանգամանքներ, որոնց մասին, սակայն, պատմիչները կա՛մ շատ հստակ և ուղիղ չեն խոսում, կա՛մ չէին կարող խոսել: Մինչդեռ դրանք շատ լավ գիտակցվել ու դրանց հաղթահարման ուղղությամբ լուրջ քայլեր են արվել: Դրա ընդհանրական ապացույցը կարելի է համարել, թեկուզ, թարգմանականին փաստորեն զուգահեռ նաև ինքնուրույն առատ մատենագրության ստեղծումը (որ ամենևին բնորոշ չէ այլ ազգերի), որի մեջ, ահա, Ազաթանգեղոսի «Հայոց պատմությունը» քրիստոնեության տարածման ու ամրապնդման հարցում իր թեմատիկ նպատակամղվածությամբ և գործառության ղեկավարող անցքային է:

*Նոր կրոնին խոչընդոտող ազգային առանձնահատկություններ*

Ա) Ավելի քան կես հազարամյակ պետական սահմաններով ամփոփվող հայաստանյան բնակչության «միալեզու» լինելու մասին Ստրաբոնի (մ. թ. ա. 1-ին դար) վկայությունը, ըստ էության, Հայաստանը հարևաններից տարբերակող, բնութագրող մի հատկանիշի արձանագրում է<sup>10</sup>: Խորենացու մոտ տարբերակիչ նույն հատկանիշի մի քանի արձանագրումներն արդեն մի համակարգ են կազմում, որ արդեն ոչ թե բնակչության բնութագրման, այլ քաղաքական հանգամանքի իմաստ ունի<sup>11</sup>: Այսինքն՝ առնվազն Արտաշիսյաններից սկսած, Հայաստանը, միայն լեզվական միատարրության հանգամանքով, իրոք, մի «միաձույլ էթնիկական թագավորության»<sup>12</sup>, յուրատեսակ ազգ-պետություն էր<sup>13</sup>, ինչը տեսանելի էր «դրսից» ու շատ լավ գիտակցվում և իմաստավորվում էր «ներսում»:

Պետական սահմաններով առանձնացող հանրությամբ, եթե արդեն որպես պատմական փաստ դարեր շարունակ բնորոշվում է ազգային առանցքային հատկանիշ լեզվական միասնությամբ, դրան շաղկապված ու դրա շուրջ պետք է գոյանար նաև քաղաքակրթական, մշակութային, սովորութային, կրոնական հատկանիշ-բաղադրիչների տարբերակիչ այլ ընդհանրությունների մի համալիր: Այս հատկանիշ-որակներով կազմված, ժամանակի մեջ ամրացած ու ավանդաբար սրբագործված արժեքային համակարգի հիմքով ազգային ինքնությունը, դրանով պայմանավորված կենցաղը և այլն, դժվարությամբ պետք է նորություն ընդուներ, առավել ևս՝ այնպիսի արմատական, հեղափոխական վերափոխման տրվեր, ինչպիսին ենթադրում էր քրիստոնեությունը:

Բ) Հայաստանի մյուս առանձնահատկությունը նրա բնակչության մեծագույն մասի ազատ լինելն էր, ստրկատիրության խիստ ցածր մակարդակը: Այս խնդիրը հիմնավորապես ուսումնասիրված է<sup>14</sup>:

<sup>10</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. 1971, 530, Հայոց պատմություն. 2024, 224:

<sup>11</sup> Այս խնդրի մասին ավելի մանրամասն տե՛ս Ս ա Ր Գ Ս Յ ա ն. 2019, 237:

<sup>12</sup> Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. 1971, 707:

<sup>13</sup> Ազգ-պետությունների առաջացումը որպես երևույթ բնորոշ է ուշ միջնադարին:

<sup>14</sup> Անգամ խորհրդային գաղափարախոսականացված պատմագրությունն արձանագրել է, որ Հայաստանը «կլասիկ» ստրկատիրական հասարակարգ չի ունեցել (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. 1971, 652, նաև՝ Մ ա ն ա ն դ Յ ա ն. 1978, 416): Անգամ հարյուր հազարներով գերեվարվածները հիմնականում բնակեցվում

Գ) Պատմական նյութը հիմք է տալիս որպես հայաստանյան հասարակության մի այլ առանձնահատկություն կամ տարբերակիչ դիտել նրա ռազմունակությունը և ռազմականացվածության բարձր աստիճանը: Արտաշիսյան շրջանի համար հունահռոմեական աղբյուրները վկայում են զինվորականության վեցանիշ տպավորիչ թվեր<sup>15</sup>: Արշակունյաց շրջանում ևս նույն պատկերն է, մասնավորապես, ըստ «Ձորանամակի»<sup>16</sup>: Իսկ դրա հիմքը իրավացիորեն համարվում է Հայաստանում ազատ քաղաքացիական բնակչության մեծ տեսակարար կշիռը՝ ընդգրկելով գյուղացուց, շինականից, քաղաքաբնակից մինչև ողջ ազնվականությունը: Նկատի ունենալով հայկական ռազմուժի և զինվորականության կարևոր դերակատարումները տարածաշրջանում, մասնավորապես պարսկական և հռոմեական/բյուզանդական պատմության տարբեր դրվագներում՝ Հայաստանը արդի գիտության մեջ բնորոշվում է որպես «ռազմական ուժի մի ամբար», իսկ դրա հիմքը համարվում է տվյալ ժողովրդի «հերոսներ գնահատող մշակույթը»<sup>17</sup>:

Ներքաղաքական հարցերում ևս զինվորականությունը առանցքային գործոն էր: Այդ մասին վկայող մի արձանագրում կարելի է համարել Ազգաթանգեղոսի այն հաղորդումը, թե Տրդատը Գրիգորին Հայոց հովվապետ կարգելու հարցը լուծում է ոչ թե միանձնյա կամ պալատական վերնախավով, այլ հրավիրում է ամբողջ զորքը և ստանում նրա համաձայնությունը<sup>18</sup>: Նույն կերպ է վարվում նաև Արշակ թագավորը Ներսեսին կաթողիկոս դարձնելու դեպքում<sup>19</sup>: Աշխարհիկ կյանքը և զինվորականի զբաղմունքը հովվապետի բարձր պաշտոնից անվերապահ գերադասում են անգամ Լուսավորչի տան ժառանգները: Հուսիկ կաթողիկոսից հետո նրա որդիներ Պապը և Աթանագիները այդ հիմքով հրաժարվեցին կրոնական դառնալ և ստանձնել կաթողիկոսական

էին քաղաքներում՝ որպես ազատ բնակչություն (Հայ ժողովրդի պատմություն. 1971, 1659): «Հայկական զորքի գերակշռող մասը բաղկացած էր հասարակության ամենաստվար դասակարգի՝ համայնական գյուղացիության ներկայացուցիչներից» (Հայ ժողովրդի պատմություն. 1971, 688):

<sup>15</sup> Հայ ժողովրդի պատմություն. 1971, 686:

<sup>16</sup> Միայն հեծելազորի թիվը 84 հազար էր՝ չհաշված հետևակը (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. 1984, 143): Ձորքի ընդհանուր քանակը գնահատվում էր 120 հազար, որին կարող էր ավելանալ նաև աշխարհազորը (տե՛ս Հայոց պատմություն. 2018, 401): Սրանք ժամանակի համար շատ մեծ թվեր են, եթե նկատի ունենանք, որ, ասենք, Ալեքսանդր Մակեդոնացու զորքը պարսիկների հետ առաջին ընդհարման ժամանակ չէր գերազանցում 40 հազարը (տե՛ս Советская историческая энциклопедия. 1961, 366):

<sup>17</sup> «Բարձր լեռնային հովիտները, որոնք ձգվում էին Միջագետքի և Կովկասի միջև, ռազմական ուժի մի ամբար էին: Ինչպես ուշ շրջանի շվեյցարական վարձկանները կամ շոտլանդական լեռնականները, որ նկատելի էին երկու կայսրությունների (պարսկական և բյուզանդական – Ա. Ա.) բանակներում: Նրանք ծագում էին հերոսներ գնահատող մշակույթից» (Brown. 2013, 276):

<sup>18</sup> Ազգաթանգեղայ Պատմութիւն Հայոց. 1909, 412:

<sup>19</sup> Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, Ի չորս դպրութիւնս. 1933, 77:

պաշտոնը<sup>20</sup>: Հոգևոր իշխանության հաջորդ «թագաժառանգ» Ներսեսը հայտնի զինվորական էր և ոչ մի կերպ չէր ուզում անցնել հոգևոր կյանքի: Նրան միայն բռնությամբ ստիպեցին դա անել և ստանձնել հոգևոր իշխանության դեկր<sup>21</sup>: Նախապես հաջող զինվորական էր նաև Մաշտոցը<sup>22</sup>:

Անվանի պատմաբան Հակոբ Մանանդյանը խոսում է հոգևորականների «զինվորամուլ բարքերի» մասին (շատ կրոնավորներ թողնում էին հոգևոր ասպարեզը ու մտնում զինվորական ծառայության) և մատնանշում ընդունված եկեղեցական հատուկ կանոններ, որոնք այդ երևույթը կանխելուն էին ուղղված<sup>23</sup>: Մշակույթի աստիճանի բարձրացված զինվորական զբաղմունքը հարգի էր այնքան, որ Ջավեն կաթողիկոսը (377–381 թթ.) քահանաներին հրահանգել կամ թույլ էր տվել («սովորեցրել էր») զինվորական զգեստ կրել<sup>24</sup>: Դա կա՛մ տուրք էր՝ նրանց «զինվորամուլ բարքերը», զինվորական կյանքի նկատմամբ նրանց ձգտումները այդ կերպ մեղմելու, կա՛մ միջոց էր նրանց համար հեղինակություն ապահովելու՝ նրանց նկատմամբ հասարակական վստահություն առաջացնելու նպատակով:

Ազատ քաղաքացիական բնակչության հասարակական-քաղաքական դերի վճռորոշությունը և այդ հիմքի վրա զինվորական զբաղմունքի տարածվածության ու հարգի լինելու կայուն մշակույթը լուրջ խոչընդոտ էր քրիստոնեության ճանապարհին. զինվորական կոշտ կյանքը նույնպիսի կոշտ կայունություն էր ենթադրում նաև նրանց ավանդական պատկերացումներում ու վարքագծում:

Ղևոնդ Ալիշանը քրիստոնեության ընդունման առիթով հայաստանյան հասարակության համար այսպիսի արձանագրում ունի. «... երբ ողջոյն ազգ մի կրօնափոխ կրլլա՝ կարճ ժամանակի մէջ. մանաւանդ այնպիսի պնդակարծիք ազգ մի՛ ինչպէս Հայոցս. զորս՝ շարժելու և հնաւանդ կրօնքէն ի նորն փոխելու համար՝ (մարդկօրէն խօսելով) արտաքին մղող ոյժ մը այլ պէտք էր: Այս ոյժն էր հսկայակերպ Տրդատայ հզոր բազուկն Գրիգորի կակուղ ձեռաց աջակցեալ»<sup>25</sup>: Իրավացի է քրիստոնեությանը դիմադրելու առումով Ալիշանի՝ հայությանը տված «պնդակարծիք» (բնականաբար, նկատի ունի ի տարբերություն այլ ազգերի) բնորոշումը, որի կրողը (բառիս ոչ բացասական, այլ «ավանդապահ» իմաստով<sup>26</sup>) ազատ բնակչությունն էր, այդ հիմքի վրա բազմաքանակ զինվորականությունը՝ ազնվականության գլխավորությամբ: Ճիշտ չէ, սակայն, Ազաթանգեղոսին հետևելով, Ալիշանի արած պնդումը, թե Տրդատի

<sup>20</sup> Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 54:

<sup>21</sup> Բուզանդը դա մեղմացնելով ներկայացնում է որպէս քրիստոնեական համեստության դրսևորում. տե՛ս Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 79:

<sup>22</sup> Կ ո ղ յ ո լ ն. 1941, 37:

<sup>23</sup> Մ ա ն ա ն դ յ ա ն. 1978, հ. Բ, 359:

<sup>24</sup> Փաստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 267:

<sup>25</sup> Ա լ ի շ ա ն. 1920, 95:

<sup>26</sup> Նույն այս առիթով մի այլ աշխատության մեջ Ալիշանը հայության համար օգտագործում է «բիրտ և հնապաշտ» բնորոշիչները (տե՛ս Ա լ ի շ ա ն. 1895, 474):

«հզոր բազուկը» ամբողջությամբ չեզոքացրեց այդ դիմադրությունը և «ողջոյն ազգ մի կրօնափոխ կըլլա՝ կարճ ժամանակի մէջ»:

Ըստ Մովսէս Խորենացու՝ Տրդատին այդպես էլ չի հաջողվում ո՛չ «սաստի» (ուժով), ո՛չ համոզելով դարձի բերել «մեծամեծ նախարարներից» սկսած մինչև «ռամիկների բազմությանը»: Դրանից ազդված ու հուսախաբ՝ նա ճգնակյաց կյանքի է անցնում: Նախարարները թունավորելով սպանում են քրիստոնեական հավատի թելադրանքով իրենց ազատությունների և աշխարհիկ բարքերի վրա բռնացող թագավորին: Եվ ահա, հայությանը բարձրագույն՝ «հանուրց հիւսիսականաց վեհագոյն»<sup>27</sup> (հյուսիսային բոլոր ազգերի մեջ վեհագոյն) գնահատականը տվող Պատմահայրը քրիստոնեությանը դիմադրելու հանգամանքով վերջին նախատիքներն է թափում նույն այդ ազգի գլխին. «Այլ զխստատութիւն կամիմ ասել, թէ և զամբարհաւածութիւն ազգիս մերոյ յիսկզբանցն և այսր. որպէս անհամբոյր բարւոյ և ճշմարտութեան անհարազատ, կամ թէ բնութիւն ունելով զբարձրայօնութիւն և զկամակորութիւն՝ ընդդիմանան կամաց թագաւորին յաղագս կրօնից քրիստոսականաց, զիտ երթալով կամաց կանանց և հարճից»: Ապա «Սուրբ Հոգու» խիստ խոսքերով դիմում քրիստոնեական հավատից խոյս տվող իր ազգին. «Ազգ թի՛ւր և դառնացող, ազգ, որ ոչ ուղղեաց զսիրտ իւր, և ոչ հաւատարմացաւ Աստուծոյ ոգի նորա: Արք Արամեանք, մինչև յե՛րբ էք ծանրասիրտք, ընդէ՛ր սիրեք զանրութիւն և զանաստուածութիւն»<sup>28</sup>:

Փալստոս Բուզանդը քրիստոնեությանն ընդդիմանալու նույնպիսի ընդարձակ մի կոնտեքստում դարձյալ ամբողջ ազգին է մեղադրում «կամակոր ազգ» կոչելով. «Ջկորստեան ճանապարհին՝ համարձակէին ի չարիս՝ կամօք գնացեալք, և կամօք լեալք որդիք բարկութեան. և առանց Աստուծոյ շրջէին յաշխարհիս կամակոր ազգ»<sup>29</sup> տանն Հայոց երկրին»<sup>30</sup>:

Արշակունի հաջորդ գահակալներից որևէ մեկի ջերմեռանդ հավատի, քրիստոնեական բարեպաշտության մասին պատմիչները չեն խոսում: Առավել ևս՝ որևէ արձանագրում չունեն, թե նրանք ունեցել են Տրդատի՝ քրիստոնեական կրոնի տարածման հետ կապված մտահոգությունները և նախանձախնդրությունը: Մինչդեռ քիչ չեն հակառակ՝ աշխարհիկ վայելքներին տրվելու, ոչ քրիստոնեական վարքի մասին վկայությունները և այդ հիմքով հոգևոր գործիչների հետ թագավորների սուր հակասությունները: Այսպես՝ Վրթանես կաթողիկոսի դեմ, ըստ Բուզանդի, հեթանոսական սովորությունները գաղտնի պահող երկու հազար հոգի մահափորձ են կազմակերպում՝ երկրի թագուհու դրդմամբ՝ «վասն զի յանդիմանէր զնա սուրբն վասն գաղտնի շնութեան գիջութեան բարոյից պոռնկութեան»<sup>31</sup>: Հուսիկ կաթողիկոսը ոչ քրիստոնեական վարք ու բարքի համար շարունակ հանդիմանում էր Տիրան թագավորին և մյուս

<sup>27</sup> Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. 1991, 358:

<sup>28</sup> Խ ո Ր Ե Ն Ա Յ Ի. 1991, 246–247:

<sup>29</sup> Նկատենք, որ նախատական այս խոսքերում Բուզանդի «կամակոր ազգ» բնորոշումը համընկնում է Խորենացու «կամակորութեանը»:

<sup>30</sup> Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 43:

<sup>31</sup> Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 19–20:

«մեծամեծներին», մինչև որ հերթական նման մի դրվագում նրան թագավորի հրամանով սպանում են բրաժեժ անելով<sup>32</sup>: Հաջորդ Արշակ թագավորը նույնպես հեռու էր քրիստոնեական բարեվարքությունից՝ «ի վտիության<sup>33</sup> ի շաղաշատության հատաւ» («թաղված էր վտիության ու մեղկության մեջ»<sup>34</sup>): Իսկ Պապ թագավորն ընդհանրապես ծնված օրից նվիրվել էր դևերին և լցված էր դևերով<sup>35</sup>, տառապում էր «ամոթալի ախտերով», հանդիմանվում էր Ներսես կաթողիկոսից, ինչի համար և Պապը նրան թունավորելով սպանեց<sup>36</sup>:

Այսինքն՝ խնդիրը միայն գաղափարախոսական չէր: Կար մի երկրորդ շատ կարևոր հանգամանք ևս. նոր կրոնը մարդու՝ աշխարհիկ կյանքի, ազատությունների և իրավունքների, կենցաղավարման, ընդհանուր վարքագծի առումով խիստ սահմանափակումներ էր մտցնում բոլորի համար՝ շինականից մինչև նախարար, մինչև թագավոր ու թագուհի: Բոլոր խավերը, և հատկապես զինվորականությունը, այն գլխավորող ազնվականությունը դժվարությամբ պետք է հրաժարվեին ազատ կյանքի սովորական դարձած ռիթմից, իրենց բազում վայելքներից, խրախճանքներից, մարզական և այլ խաղերից, տոնախմբություններից, ընդհուպ՝ ազատ մտածողությունից, որոնք արգելում կամ դոգմաների իր համակարգով սահմանափակում էր նոր կրոնը:

Պատմիչները, որ շատ հստակ խոսում են քրիստոնեության տարածման լեզվական խոչընդոտի մասին, վերոնշյալ խոչընդոտների մասին, հասկանալի պատճառով, նույնքան հստակ ձևակերպված վկայություններ չէին կարող ունենալ: Նկատի առնելով կարծես թե չվիճարկվող այն տեսակետը, թե քրիստոնեությունն առաջին հերթին ճնշվածների, անազատների կրոն է եղել, ապա Հայաստանում դրանով գայթակղվող, դրան տրվող խավը խիստ սակավաթիվ պիտի լիներ, դիմադրողը՝ ծանրակշիռ ու հզոր: Բայց սա դեռ ամենը չէ:

### *Նյութի օտար և ուսմունքի բարդ լինելը*

Ինչպես ասվեց, քրիստոնեության քարոզչության առաջին ձեռնարկը պետք է լիներ Աստվածաշունչը, որի թարգմանությունն էլ, բնականաբար, սկսվեց գրերի ստեղծումից անմիջապես հետո: Ըստ Կորյունի՝ դրանով միանգամից լուծվեցին բոլոր հարցերը. «Այն ժամանակ անպայման սքանչելի դարձավ մեր երանելի ու ցանկալի Հայաստան աշխարհը, ուր երկու հավասարակիցների ձեռքով հանկարծ, մի անգամից եկան հասան, հայաբարբառ, հայերենախոս դարձան օրենուսույց Մովսեսը՝ մարգարեական դասի հետ, և առաջադեմ Պողոսը՝ բոլոր առաքելական գնդով, Քրիստոսի աշխարհակեցույց Ավետարանի հետ միասին: Ի՛նչ սրտալիր ուրախություն էր այնտեղ այնուհետև, և ի՛նչ հաճելի տեսարան աչքի համար: Որովհետև մի երկիր, որ անունն անգամ չէր լսել

<sup>32</sup> Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 42–43:

<sup>33</sup> Տարբեր ընթերցվածներով աղավաղված այս բառը Ստ. Մախասայանցը թարգմանել է՝ ընդունելով Ն. Բյուզանդացու ուղղումը (տե՛ս Բ ու լ գ ա ն դ. 1968, 324, ծթ. 88):

<sup>34</sup> Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 115:

<sup>35</sup> Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, 218:

<sup>36</sup> Խ ո Ր Ե ն ա գ ի. 1991, 306:

այն կողմերի, ուր բոլոր աստվածային սքանչելի գործերը կատարվեցին, շատ շուտով, իսկույն իմացավ բոլոր եղած բաները, ոչ միայն ժամանակով կատարվածները, այլև առաջագույն հավիտենականությունը, և հետո եղածները, աշխարհի սկիզբը և վերջը և բոլոր աստվածային ավանդությունները»<sup>37</sup>:

Վաղուց նկատվել է, որ այս խոսքը, ի թիվս բազմաթիվ այլ բնագրական աղերսների, բառացի նույնությամբ կա նաև Ազաթանգեղոսի բնագրում<sup>38</sup>. «Այն ժամանակ երանելի, ցանկալի և անչափ սքանչելի եղավ մեր Հայոց երկիրը: Ինչպես Մովսեսը, որ միանգամից եբրայական բանակին օրենսուսույց էր եղել, ամբողջ մարգարեական դասի հետ և կամ ինչպես առաջադեմ Պողոսը բովանդակ առաքելական գնդով Քրիստոսի աշխարհակեցույց Ավետարանի հետ, նույնպես և սա (Գրիգորը) գալով, հասնելով, երևալով՝ հայերենաբարբառ, հայերենախոս դարձավ»<sup>39</sup>:

Ազաթանգեղոսի մոտ դրանով, ըստ էության, փառավորվում է Գրիգորը՝ Հայաստանում քրիստոնեության վերջնական ու ամբողջական տարածումը ի կատար ածելը կայացած իրողություն ներկայացնելով: Ինչպես տեսանք, դա ոչ մի կերպ իրականությանը չի համապատասխանել: Կորյունի մոտ դրանով, ըստ էության, ներբողվում է Մաշտոցը՝ նրա ստեղծած գրերով Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը որպես քրիստոնեության վերջնական տարածման ու ամրապնդման միջոց ներկայացնելով: Սա նույնպես իրականությանը չի համապատասխանել: Երկու դեպքում էլ գործ ունենք գրական հնարքի՝ ժամանակի «քերթողական արվեստի» կիրառման, ոչ թե փաստի արձանագրման հետ: Երկու դեպքում էլ, սակայն, դա պատմիչների կողմից պատմական իրականության դեմ մեղանչում չէ, այլ որոշակի մի փաստի նշանակության բացարձակացմամբ «լսարանի» վրա ներազդելու, իրենց գործի հիմնական առաքելությունն ապահովող ազդու համարված միջոցի արդարացված կիրառում<sup>40</sup>:

Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը քրիստոնեության լիակատար և վերջնական տարածման համար միակ ու բավարար պայման է համարում նաև Ղազար Փարպեցին<sup>41</sup>:

<sup>37</sup> Կ ո ղ յ ու ն. 1941, 57:

<sup>38</sup> Կորյունի և Ազաթանգեղոսի գործերի բնագրական աղերսների ամբողջական պատկերը տե՛ս՝ Բ ի լ զ ա ն դ ա ց ի. 1900, 36–139:

<sup>39</sup> Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. 1983, 477:

<sup>40</sup> Կորյունը գրական նույն հնարքին է դիմում նաև աղվանական գրերի ստեղծումից հետո Աստվածաշնչի՝ այդ լեզվով թարգմանելու փաստի արձանագրման առիթով. «... երանելոյն Երեմիայի եպիսկոպոսի ի ձեռն առեալ՝ վաղվաղակի զաստուածային գրոց թարգմանութիւնս ի գործ արականէր, որով անդէն յակն թօթափել վայրենամիտ և դատարկասուն և անասնաբարոյ աշխարհն Աղուանից մարգարէագէտք և առաքելաձանօթք և աւետարանաժառանգք լինէին, և ամենայն աւանդելոցն Աստուծոյ ոչ իփք անտեղեակք» (Կ ո ղ յ ու ն. 1941, 70):

<sup>41</sup> Տե՛ս Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրթ առ Վահան Մամիկոնեան. 1904, 13–17:

Ոչ միայն այդպես չի եղել, այլև ժամանակին էլ այդպես չի համարվել իրականում<sup>42</sup>:

Ինչ-որ պահի, կարծում ենք՝ հենց ի սգբանե, համարվել է, որ հետապնդվող քաղաքական խնդիրը լուծելու համար պետք է ավելի գործուն միջոցներ գտնել, ավելի արդյունավետ լծակներ ստեղծել, քան է Աստվածաշունչը (գումարած կրոնական այլ գրականությունը)՝ հայերեն թարգմանությամբ: Այսպիսի պնդման համար, ինչպես ասվեց, արդեն իսկ ընդհանրական ապացույց կարելի է համարել ինքնուրույն գրականության մեծ տեսակարար կշիռը ոսկեդարյան մատենագրության մեջ՝ երևույթ, որ գրերի ստեղծման կամ քրիստոնեության տարածման խնդրի լուծման ելակետով դժվար է գտնել այլ ժողովուրդների մեջ:

Անվանի հայագետ Մանուկ Աբեղյանը, ընդհանրապես մնալով Աստվածաշնչի թարգմանության նշանակությանը պատմիչների տված գնահատականների շրջանակում, անգամ դա ավելի ուժեղացնելով, երկու հակիրճ, կարելի է ասել՝ լուսանցային, սակայն ճշգրիտ դիտարկում ունի, որոնք իրենց կշռով իրականում շատ ավելին են, քան ներկայանում են նրա վերլուծության ամբողջական կոնտեքստում. «Դրսից եկած օտարը (նկատի ունի քրիստոնեական ուսմունքը – Ա. Ս.), հարկավ, այնպես շուտ ամենքին մոռացնել չէր կարող տալ հայրենի ավանդությունները, որոնց մի մասը մինչև վերջերս էլ (այսինքն՝ XIX–XX դարերում – Ա. Ս.) դեռ մնում էր իբրև ժողովրդական հավատք»<sup>43</sup>:

Եթե անգամ նշված այդ դարերում հեթանոսությունից մաս էր պահպանվել որպես ժողովրդական հավատք, ապա պատկերացնել կարելի է, թե ինչպիսին պետք է լիներ դրա իրական կշիռը V դարում:

Նոր կրոնի դեմ ի սկզբանե հզոր մրցակից կար՝ ի դեմս դեռ գոյատևող հեթանոսական հավատալիքների՝ որպես որոշակիորեն ազգային դարձված «կուռ պաշտամունքային կառույց»<sup>44</sup>, աստվածների՝ որոնք հայկական էին անուններով, կենսագրությամբ, հայրենի աշխարհագրական միջավայրի հետ կապված հրաշալի վիպական պատմություններով, առինքնող կերպարներով, «փորձված» զորությամբ, բոլորին հասկանալի ու սիրելի երգերով, բանաստեղծություններով, սրբագործված ծեսերով: Այլ երկրի աշխարհագրության, այլ ժողովրդի պատմությունների, անձանոթ կերպարների վրա կառուցված Աստվածաշնչով ներկայացող քրիստոնեությունն այս բոլոր առումներով ոչ միայն, իրոք,

<sup>42</sup> Խորենացին, որ նաև քրիստոնեության հետ կապված հարցերում չափազանցությունների չի տրվում, իսկ Աստվածաշնչի թարգմանության հետ կապված կարևոր մանրամասներ է հաղորդում, խուսափում է նման ներբողական գնահատականից:

<sup>43</sup> Ա ք ե ղ յ ա ն. 1968, 106: Նույնպիսի արձանագրում է անում Լևոն Խաչիկյանը. «Նզովքը, արտաքսումը եկեղեցուց, յոթնամյա ապաշխարությունը և սահմանված այլ պատիժներն անգամ անգոր են եղել արմատախիլ անել հազարամյա հնությունից եկող հեթանոսական հավատալիքներն ու պատկերացումները ժողովրդի գիտակցությունից, և դրանք հարատևել են մինչև վերջին տասնամյակներն ու գրանցվել Հայաստանի մի շարք շրջաններում 19–20-րդ դարերի հայ ազգագրագետների կողմից» (տե՛ս Խ ա չ ի կ յ ա ն. 2012, 19):

<sup>44</sup> Հայոց պատմություն. 2024, 581:

օտար էր, այլև զգալիորեն զիջում էր գրավչության հարթության վրա: Դժվար է պատկերացնել, որ ժամանակի հայ մարդու համար որևէ սաղմոս ավելի սրտամոտ կլիներ, քան ասենք, Խորենացու ավանդամբ «Վահագնի ծնունդը», «խաղաղություն ու շենություն բերող» Տիգրանի վեպը, Արտաշեսի ու Սաթենիկի «սիրավեպը»: Դժվար է պատկերացնել, որ ժամերգություններն ավելի գրավիչ կլինեին, քան «թվեյաց երգերը», «վիպասանքը», «Գողթան երգերը», Նավասարդյան և այլ տոնահանդեսները, մարզական խաղերը, աստվածներին մատուցված զոհաբերության արարողությունները<sup>45</sup>: Անգամ, դատելով լայն զանգվածների մեջ տարածված հայրենի հեթանոսական երգերի, զրույցների ու վեպերի մեզ հասած պատառիկներից, դրանց համեմատ աստվածաշնչային պատմությունները միապաղաղ էին, միանման, դրամատիզմով անչքի չընկնող, հուզական առումով թույլ և չէին կարող հաղթել մրցակցության մեջ: Հայրենականը, ոչ միայն հազարամյա ավանդույթի իներցիայի ուժով, այլև իր գրավչությամբ, ազգային թեմատիկայով, ծանոթ, նաև դյուրամարս լինելու հանգամանքներով ակնհայտորեն ավելի հարազատ ու գերադասելի պետք է լիներ ժամանակի հայ մարդու համար<sup>46</sup>:

Եվ, այսուամենայնիվ, քրիստոնեությունը հաղթեց: Այս փաստին հանդիման, ի հեճուկս իր վերը բերված էպիզոդիկ, բայց ճշգրիտ վերապահումների, Մ. Աբեղյանը նույնպես համարում է, որ «սառույցը հալվեց» Սուրբ գրքի հայերեն թարգմանությամբ. «Այն, ինչ որ օտար լեզուներով հնարավոր չէր անել, շատ հեշտությամբ գլուխ էր գալիս հասկանալի հայերեն լեզվով ...»<sup>47</sup>, «Հին կտակարանի երգերից ավելի նրա պարզ զրույցներն ու պատմվածքները ոչ միայն հասկանալի, այլև շատ հաճելի պիտի լինեին դեռ մանկական հայ մտքերին: Նրանք դյուրությամբ յուրացնելով այն՝ նույնիսկ միամտությամբ կապում էին իրենց երկրի այս կամ այն տեղի հետ ...»<sup>48</sup>: Որպես նման օրինակներ մատնանշում է Նոյյան տապանը Արարատի վրա իջեցնելու, Հայաստանը «Թորգոմա տուն», հայերը՝ «Ասքանազյան ազգ» կոչելու փաստերը<sup>49</sup>: Սակայն այս «կապերը» տեսնելը կամ ստեղծելը Աստվածաշնչի հետ «հայ մտքի դեռ մանկական լինելու», առավել ևս ժողովրդական «ստուգաբանության-հայտնազործության» արդյունք չէին կարող լինել: Ակնհայտորեն դա արել է եկեղեցին, արել է մտածված, Աստվածաշնչի տեքստի՝ այդ նպատակով մանրազնին

<sup>45</sup> Ոչ որպես իրողության արձանագրում, այլ ազգին ուղղված նախատինք, հենց այդպես էլ ձևակերպում է Բուզանդը. «Նրանք սիրում էին իրենց երգերը, առասպելները, վիպասանությունները, նրանց նկատմամբ փոթեռանդ էին, նրանց հավատում էին, նրանց մեջ հարատևում». – Բ ո շ ա ն դ. 1968, 91:

<sup>46</sup> Մեր այս վերլուծությունը, բնականաբար, կապ չունի երկու կրոններից մեկի կամ մյուսի նկատմամբ վերաբերմունքի կամ գերադասելիության խնդրի հետ: Միաստվածային քրիստոնեությունը հաղթեց մրցակցության մեջ (և ոչ միայն մեզ մոտ), ուրեմն այն իր որակներով ու հատկանիշներով լավագույնս բռնեց ժամանակի քննությունը (այս մասին տե՛ս Ս ա թ գ ս յ ա ն. 2023, 182–186):

<sup>47</sup> Ա բ ե ղ յ ա ն. 1968, 105:

<sup>48</sup> Ա բ ե ղ յ ա ն. 1968, 107:

<sup>49</sup> Ա բ ե ղ յ ա ն. 1968, 108:

ուսումնասիրությամբ ու մանրակրկիտ փնտրտուքով՝ հենց Մ. Աբեղյանի մատնանշած հայ իրականությանը ու հայ մարդուն Աստվածաշնչի «օտար» լինելու հանգամանքի խոչընդոտը հնարավորինս մեղմելու, նրան դրանում հարագատ, «ազգային» ինչ-որ բան տալու համար: Դրանք ժամանակի գիտական մտքի արգասիք են, օտար այդ նյութի մեջ ազգային ինչ-որ բան դնելու ջանքերի արդյունք, ուստիև ճիշտ չէ այդ հիմքով հայ միտքը «մանկական» գնահատելը<sup>50</sup>: Չէ՞ որ Աստվածաշունչը հավակնում էր տալ բոլոր ազգերի ծագունաբանությունը, ուստիև հայ մարդը պետք է դրանում ոչ միայն գտներ իր հավաստի «ծննդյան վկայականը», այլ նաև տեսներ իր երկիրը, իր ազգի ինչ-որ նշանակալի դերակատարումը, ու այդ ամենը՝ հնարավորինս բարենպաստ դիրքերում ու հանգամանքներում: Սուրբգրային վերոնշյալ մի քանի տեղերի «հայկականացումը» չէր կարող լուծել նյութի «օտար» լինելու խոչընդոտի հիմնական խնդիրը:

Նույնքան կարևոր է Մ. Աբեղյանի երկրորդ դիտարկումը. «Բացի այդ՝ ոչ միայն ժողովրդի, այլև նույնիսկ շատ վանականների համար, հարկավ, դեռ ըմբռնելի չէին քրիստոնեական սկզբունքները»<sup>51</sup>:

Խոսքը վերաբերում է V դարասկզբին: Այս դեպքում կարճ ասած. եթե անգամ որոշակի հոգևոր կրթությամբ հոգևորականի համար քրիստոնեությունը որպես ուսմունք ըմբռնելի չէր, բնականաբար, այն շատ ավելի դժվարամարս ու անըմբռնելի պիտի լիներ մյուս բոլոր խավերի համար:

Այսինքն՝ իրականությունից շատ հեռու է Ագաթանգեղոսի Պատմությամբ մատուցվող այն տպավորությունը, թե Գրիգորի և Տրդատի ջանքերով քրիստոնեության տարածումը Հայաստանում մի հաղթարշավ էր և կարճ ժամանակում դարձավ լիակատար ու վերջնական: Տարբեր առիթներով պատմիչների վկայությունների շարքը կրոնական իրավիճակի մասին հակառակ իրողությունն է ներկայացնում: Բուզանդին վերապատմելով՝ որպես հիմք պետք է ընդունել հետևյալ իրականությունը. Հայաստանում քրիստոնեությունն ընդունվել էր «հարկադրաբար», «առանց ջերմեռանդ հավատի» և «համարվել մարդկային մոլորություն»: Հայ հասարակության՝ վերը ներկայացված առանձնահատկությունների ֆոնին ավելի քան բնական է, որ այլ կերպ չէր կարող լինել ամբողջ IV դարում և V դարի սկզբում<sup>52</sup>:

<sup>50</sup> Աբեղյանը, հայկական միտքը «մանկական» կոչելով, ըստ էության, փորձում է դրանով բացատրություն գտնել նաև այն հարցին, թե ինչու քրիստոնեության պետական կրոն ընդունումից հարյուր տարի անց էլ նոր կրոնը խիստ անբավարար էր տարածված: Եթե դա վերաբերում է հայ քաղաքական մտքին, ապա դժվար է այն «մանկական» կոչել, որը V դարում դրեց և հրաշալի լուծեց ճակատագրական ու կենսական համազգային խնդիր:

<sup>51</sup> Ա բ ե ղ յ ա ն. 1968, 106:

<sup>52</sup> Խորենացին երկու անգամ արձանագրում է, որ թագավորական իշխանության թուլացումը հատկապես նպաստում էր «թաքնված» հեթանոսության ակտիվացմանը. «և որ ի նմա ղօղեալ աղանդն հեթանոսական, թագուցեալ յաւուրցն Տրդատայ մինչև ցայն ժամանակս, և ապա յայտնեցաւ ի վատթարել թագաւորութեանն Արշակունյաց ...» (Խ ո Ր Ե ն ա ց ի. 1991, 316): «Քանզի մնացեալ արմատ

Այսպիսով՝ հայաստանյան մոնոէթնիկ հասարակությունը, առանձնացված ու եռաշերտ պարսպված միալեզվությամբ, ազգային ինքնության կայացած արժեքային համակարգով, աշխարհիկ կյանքին սովոր ազատ բնակչությամբ, ռազմական գործի հարգի լինելու մշակույթով, զինվորականության բարձր հեղինակությամբ ու տեսակարար կշռով՝ ի սզբանե արդեն իսկ մի յուրատեսակ «ամուր ընկույզ» էր նոր մի վարդապետությամբ այդ ամենը մերժող կրոնի համար: Ուստիև՝ իրականությանը չի կարող համապատասխանել նաև պատմիչների այն պնդումը և գիտնականների այն եզրահանգումը, թե միայն Աստվածաշնչի թարգմանությամբ անմիջապես հաղթահարվեցին քրիստոնեության տարածման բոլոր խոչընդոտները, լուծվեցին բոլոր խնդիրները:

*Աստվածաշունչը հայերեն ունենալը բավարար չէր քրիստոնեության վերջնական տարածման համար*

Օտար ծագմամբ, օտարի պատմության վրա հենված, օտար կերպարներով Աստվածաշունչը, դրանով մատուցվող, անգամ կրոնավորների համար դժվար ըմբռնելի վարդապետությունը չէր կարող արդյունավետ աշխատել այնպիսի հասարակությունում, ինչպիսին հայկականն էր: Չէր կարող կարճ ժամանակում լուծել ավանդական հավատալիքների վերջնական մերժման, նոր կրոնի արմատավորման և մանավանդ՝ «ջերմեռանդ» դարձնելու հարցը, մինչդեռ դա նաև ազգային իշխանության պահպանման կենսական ու հրատապ քաղաքական խնդիր էր:

Աստվածաշնչում, քրիստոնեական ուսմունքը ներկայացնող թարգմանական-քարոզական և այլ գործերում, բնականաբար, ոչինչ չկար ու չէր կարող լինել ո՛չ հայ իրականության, ո՛չ, առավել ևս, հայկական աստվածությունների մասին: Դրանց հերքումը, մերժումը, «սուտ», «սնոտի», «անշունչ», «անզոր» լինելու մասին որևէ եկեղեցականի, քարոզչի «օդում» ասածը չէր կարող հավատ ներշնչել: Հայկական յուրահատուկ միջավայրում դա կարող էին անել հայրենական պատմության հետ կապված և ազգային այնպիսի վստահելի հեղինակություններ, ինչպիսիք որ, ըստ Ավետարանի, էին կամ ներկայացնում են Քրիստոսը և նրա առաքյալները՝ իրենց միջավայրում: Հայ մարդուն համոզելու ու նրան անվերադարձ ու ջերմեռանդ քրիստոնյա դարձնելու համար պետք էր նրան տալ վստահելի մի այլ հիմք, եղած ավանդականին մրցակից-այլընտրանք՝ ազգային հիմքի վրա՝ հայկական մի նոր «Աստվածաշունչ», մի նոր «Ավետարան»՝ ամբողջությամբ հայկական նյութով, Հայաստանի պատմության հետ սերտորեն կապված դեպքերով, հայաստանյան աշխարհագրությամբ, գրավիչ և հուզիչ ներգործուն պատմություններով, ազդու և համոզիչ ազգային կերպարներով: Պատկերավոր ասած՝ ստեղծվեր մի գործիք, որով պետք է ջարդվեր հայկական ավանդական ինքնության «ամուր ընկույզը», մաշեցվեր «պնդակարծիք» ու «կամակոր» հանրության դիմադրությունը: Նման խոստովանություն կամ արձանագրում, բնականաբար, չէր կարող անել մատենագիրներից որևէ մեկը:

դառնութեան հեթանոսական աղանդոյն ի ժամանակի անիշխանութեանն ի վեր երևեալ՝ ի բազումս տարածեցաւ ...» (Խ ո Ր Ե Ն ա գ ի. 1991, 340):

Սակայն այդպիսի ոչ բարդ ու ակնհայտ եզրահանգման չէր կարող չգալ ժամանակի քաղաքական միտքը՝ Կորյունի հիշատակած «Աշխարհահոգ խորհրդի»<sup>53</sup> կարգի մի ուղեղային կենտրոն՝ նման գործի մտահղացմամբ: Դրա համար լավագույն ատաղձը հենց Հայաստանում քրիստոնեությունը պետականորեն ընդունման շրջադարձային պատմական իրադարձություն-իրողությունը կարող էր լինել, որին պետք էր այնպիսի կերպարանք տալ, որ այն պատմական փաստերի չոր արձանագրումից վերածվեր գրավիչ, ազդու, համոզիչ, ինչ-որ տեղ՝ ազդեցիկ քարոզչական նյութի: Ազաթանգեղոսի Պատմությունն էլ հենց դրա վրա հյուսված, կառուցված մի այդպիսի յուրատեսակ ներգործուն լեզուն, ազգային «Ավետարան» պետք է լիներ, ճիշտ այնպես, ինչպես Քրիստոսի կյանքի ու գործունեության վրա կազմված Ավետարանը: Լեզունդի առանցքային կերպարները պետք է նույնքան և ավելի գունեղ ու համոզիչ լինեին հայկական միջավայրի համար, որքան աստվածաշնչային կերպարներն իրենց միջավայրում: Այն տարբերությամբ միայն, որ հայկական այդ «Աստվածաշունչը» կամ «Ավետարանը» ոչ թե կրոնական նոր մի ուսմունք պետք է ստեղծեր կամ մատուցեր, այլ ճանապարհի հարթեր, դառնար վստահելի մի կամուրջ, որով «գետի» հեթանոսական ափից հայ մարդը վստահ, համոզված կամ ակամա անցներ քրիստոնեական ափ:

Ե՞րբ կարող էին հայ քաղաքական միտքը, Հայոց եկեղեցին կամ նրա «Աշխարհահոգ խորհուրդը» գալ նման եզրահանգման. նախորդ շուրջ մեկ դարի փորձառության, թե՛ Աստվածաշնչի թարգմանության «փորձարկումից» ստացված չգոհացնող արդյունքի հիման վրա: Կարծում ենք՝ ավելի շուտ առաջին հիմքով:

Եթե շինականներից ոչ բոլորը և ոչ միշտ կարող էին առիթ ունենալ լսելու Աստվածաշնչի քարոզչությունը հասկանալի հայերենով, ապա նախարարների, թագավորի, թագուհու, այլ խոսքով՝ բարձր ազնվականության համար դա խնդիր չպիտի լիներ ամբողջ հարյուր տարի: Հայաստանում հունարեն և ասորերեն կրթությունը, բնականաբար, առաջին հերթին հենց այս դասին էր մատչելի: Եթե անգամ այդ լեզուներին չէին տիրապետում, ցանկության դեպքում դժվար չպիտի լիներ անձնական մի թարգմանիչ գտնելը: Սրան ավելացրած՝ գիտական ուսումնասիրություններով արձանագրված այն փաստը, որ Աստվածաշնչի՝ հայերենով մատուցման խնդիրը, այնուամենայնիվ, ինչ-որ չափով լուծվել է հընթացս՝ բանավոր զուգահեռ թարգմանությամբ կամ «այլալեզու» (հետերոլեզիկ) ընթերցմամբ: Դա տարածված է եղել այնքան, որ բանավոր թարգմանիչների մի ամբողջ շահագրգիռ խավ է գոյացել ընթացքում, ինչը կարող էր նաև արգելակող հանգամանք լինել հայերեն գրերի ստեղծման համար<sup>54</sup>:

<sup>53</sup> Այսպես է բնորոշում (կամ անվանում) Կորյունն այն մարմինը, որը քննարկեց Մաշտոցի ներկայացրած խնդիրը և օրակարգում դրեց գիր ունենալու հարցը (Կ ո Ր Յ ո Ւ Ն. 1941, 42):

<sup>54</sup> Ст'у С а р к и с я н. 1980, 4, 20, Ս ա ր գ ս յ ա ն. 1990, 26–27:

*Եզրակացություն*

Գիտության մեջ միմյանց հետ կապվել են Ազաթանգեղոսի Պատմության ստեղծման շարժառիթի և թվագրման խնդիրները: Նկատի ունենալով այս գործի թեմատիկ բնույթը՝ դա բանական մոտեցում կարելի է համարել ընդհանրապես: Նման մոտեցմամբ հարցը դիտարկվել է ներեկեղեցական պայքարի հարթությունում՝ որպես ենթադրյալ «հունասեր» և «ասորասեր» կուսակցությունների մրցակցության մի դրսևորում, ինչը նեղացնում, փոքրացնում է ժամանակին այս գործին տրված կարևորությունը, իրական դերակատարությունը և կշիռը, ուստի և չի կարող թվագրման վստահելի հիմք հանդիսանալ (այդ հարցին առանձին անդրադարձել ենք)<sup>55</sup>:

Նույն մոտեցմամբ, սակայն ոչ թե ներեկեղեցական, այլ ավելի լայն՝ համազգային հարթության վրա է գնահատում Ազաթանգեղոսի Պատմության ստեղծման շարժառիթների ու ժամանակի հարցը հայր Բարսեղ Սարգիսյանը: Նրա եզրահանգումը մեջբերենք ամբողջությամբ՝ կարևորելով երրորդ կետը.

Ա) «Որպես զի կարենար վերոյիշեալ առանձին գրութիւններն յաջողութեամբ ի մի ձուլել և Հայաստանի մէջ հանդիպած այն մեծագոյն դէպքին ամբողջական և կատարեալ պատմութիւն մի կազմել, յորում մեծապէս փայլեցան թէ՛ Գրիգոր, թէ՛ Տրդատ և թէ՛ Հռիփսիմեանք. այնպէս՝ որ ալ չի տեսնուէին անոր մէջ զգալի զանազանութիւնք և խտրոցք»:

Բ) «Որովհետև Հայոց ի քրիստոնէութիւն դառնալու այդ նշանաւոր դէպքն և դիւցազունքը՝ յընթացս պարագայից ամաց՝ հայ ժողովրդեան և վիպասանից բերանը տարբեր վիպաց և գրուցաց գոյներ և կերպարանք առած էին, քան որ ինչ գտանէին վերոյիշեալ գործոց մէջ և առ օտարազգի մատենագիրս, ուստի խմբագիրն ինքնին հայազգի լինելով և հայերէն դպրութեան և գրոց գիտովը զուարճացած, բնականաբար հարկ էր, որ զայնս ևս ներմուծէր իւր խմբագրութեան մէջ, թէ՛ զինքն, թէ՛ իւր ժամանակակից համազգիները գոհացնելու աղագաւ»:

Գ) «Որպէս զի այն գրութեանց ցամաք կմախքները մարմնաւորելով և գեղերեսելով ազգային և ազգայնոց առհասարակ ընդունելի և փարելի լինէր, յորում և լաւ հաջողել է: Այս բանս յետագայ պատմագրաց վերայ ունեցած այն ամենամեծ ազդեցութենէն իսկ քաջ կը տեսնուի»<sup>56</sup>:

Այս գնահատական-մեկնաբանությունները, ընդհանուր առմամբ, նույնպես շատ համեստ են որպես Ազաթանգեղոսի Պատմության ստեղծման շարժառիթ և չեն կարող բավարար համարվել ժամանակի քաղաքական առաջնահերթության կոնտեքստում: Բ. Սարգիսյանի խոսքում առանցքային համարենք «Որպէս զի ... ազգային և ազգայնոց առհասարակ ընդունելի և փարելի լինէր» ձևակերպումը որպես տվյալ գործի շարժառիթի ձևակերպում: Այսինքն՝ որ այն գոյություն ունեցող տարբեր բաղադրիչներից թարգմանվել<sup>57</sup>, կազմվել և խմբագրվել է, որպեսզի քրիստոնեության ընդունման հետ կապված նյութը

<sup>55</sup> Ս ա Ր գ ս յ ա ն. 2025, 3–24:

<sup>56</sup> Ս ա Ր գ ի ս ե ա ն. 1890, 270:

<sup>57</sup> Բ. Սարգիսյանը համարում է, որ այդ բաղադրիչները եղել են հունարեն:

և կերպարները մեկտեղված (Գրիգոր, Տրդատ, Հռիփսիմյաններ) ավելի սիրելի, ցանկալի լինեն հայության համար: Այս հիմքով այն կարելի է գնահատել որպես մեկ քայլ Ազաթանգեղոսի Պատմության ստեղծման համազգային, ոչ թե ներեկեղեցական նշանակության ընկալման, և կես քայլ՝ դրա, որպես կարևոր մի քաղաքական խնդիր, հետապնդելու մեկնաբանման ուղղությամբ: Թերևս, հենց այս ընկալմամբ է, որ Բ. Սարգսյանն անում է Ազաթանգեղոսի Պատմության ամենավաղ թվագրումը՝ 426–430 թվականներով (մի այլ տեղ՝ 420–430 թթ.)<sup>58</sup> այն դնելով, ըստ էության, Աստվածաշնչի թարգմանությանը զուգահեռ<sup>59</sup>:

Քրիստոնեության լիակատար ու վերջնական տարածմամբ ազգային իշխանության (մասնավորապես եկեղեցու) պահպանման համազգային քաղաքական օրակարգի մեկնակետից պետք է դիտարկել Ազաթանգեղոսի Պատմությունը: Ըստ այդմ՝ այն եղել է առաջնային կարևորության մի ձեռնարկում՝ մի տեսակ պարտադիր «նախապայման»՝ Աստվածաշնչի թարգմանությամբ քրիստոնեության քարոզչության գործնական արդյունավետության ապահովման համար: Եղել է հիմնական «քաշող ուժ»՝ այդ խնդիրը լուծելու նպատակով ստեղծված ոսկեդարյան ողջ թարգմանական և ինքնուրույն գրականության համատեքստում: Քրիստոնեության վերջնական տարածման ու ամրապնդման համազգային քաղաքական խնդրի տրամաբանությամբ ու բանական մոտեցմամբ, ահա, այն պետք է արդեն մտահղացված լիներ նախապես, գրերի գյուտից առաջ: Եվ պետք է ստեղծվեր առնվազն Աստվածաշնչի թարգմանությանը զուգահեռ՝ որպես վերջինիս դեմ հայ ազգային ինքնության օբյեկտիվորեն առկա եռաշերտ պատենշի հաղթահարման, ինքնության նոր առանցքի ձևավորման համար ճանապարհի հարթող, դրանով իսկ՝ եկեղեցու ազգային իշխանության պահպանման մի գործիք:

*Աշոտ Սարգսյան – պ. գ. թ., Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի (Մատենադարան) V–XIV դարերի հայ մատենագրության ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ V–XIV դդ. պատմագրություն, հայ քաղաքական մտքի, Ղարաբաղյան շարժման պատմություն: Հեղինակ է 5 գրքի և 22 հոդվածի:  
ashot.sargssyan@gmail.com*

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Աբեղյան Մ. 1968, Երկեր, հ. Գ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 694 էջ [Abegyan M., 1968, Collected Works, vol. III. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 694 p. (in Armenian)]:

<sup>58</sup> Տե՛ս Ս ա ռ գ ի ս ե ա ն. 1890, 319, 343:

<sup>59</sup> Արժևորելով Բ. Սարգսյանի՝ Ազաթանգեղոսի Պատմությանը վերաբերող ծավալուն հետազոտությունը՝ Լևոն Խաչիկյանը դրանով ապացուցված է համարում, որ այն նախաձեռնվել և կազմվել է «5-րդ դարի սկզբներին՝ հայկական այբուբենի ստեղծումից անմիջապես հետո» (տե՛ս Խ ա չ ի կ յ ա ն. 2012, 32):

Ազգաթանգեղոս. 1983, Հայոց Պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, ԵՊՀ հրատ., 551 էջ [Agathangelos, 1983, History of Armenia, Modern Armenian Translation with Annotations by Aram Ter-Ghevondyan, Yerevan, YSU Publishing House, 551 p. (in Armenian)]:

Ազգաթանգեղայ Պատմութիւն Հայոց. 1909, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տփղիս, Արագատիպ Մնացական Մարտիրոսյանցի, 474 էջ [Agathangelos. 1909, History of Armenia, Compiled by G. Ter-Mkrtchyan and S. Kanayants. Tiflis, Mnatsakan Martirosyants Publishing House, 474 p. (in Armenian)]:

Ալիշան Ղ. 1895, Հին հաւատք կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ, Սուրբ Ղազար, 522 էջ [Alishan Gh., 1895, Ancient Belief or the Pagan Religion of the Armenians. Venice, St. Lazarus Publishing House, 522 p. (in Armenian)]:

Ալիշան Ղ. 1920, Արշալոյս քրիստոնէութեան Հայոց, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, Սուրբ Ղազար, 280 էջ [Alishan Gh., 1920, The Dawn of Christianity among the Armenians, Second Edition. Venice, St. Lazarus Publishing House, 280 p. (in Armenian)]:

Բիւզանդացի Ն. 1900, Կորին Վարդապետ և նորին թարգմանութիւնք, Գիրք Մակաբայեցոց, Եվթաղ Աղեքսանդրացի, Ազգաթանգեղոս և Փաւստոս Բիւզանդ. հանդերձ դիտողութեամբք, տեղեկութեամբք և լուսաբանութեամբք, Տփղիս, Մարտիրոսեանց տպարան, 520 էջ [Buzandatsi N., 1900, Koryun Vardapet and New Translations: Book of the Maccabees, Euthalius of Alexandria, Agathangelos and Pavstos Buzand, with Observations, Information and Coverage, Tiflis, Martirosyants Publishing House, 520 p. (in Armenian)]:

Խաչիկյան Լ. 2012, Աշխատություններ, հ. Ա, «Նաիրի» հրատ., Երևան, 546 էջ [Khachikyan L., 2012, Works, V. I. Yerevan, “Nairi” Publishing House, 546 p. (in Armenian)]:

Կորյուն. 1941, Վարք Մաշտոցի, Բնագիրը ձեռագրական այլ ընթերցվածներով, թարգմանությամբ, առաջաբանով և ծանոթագրություններով ի ձեռն պրոֆ. դ-ր Մանուկ Աբեղյանի, Երևան, Հայպետհրատ, 126 էջ [Koryun, 1941, The Life of Mashtots, Edition Based on the Manuscript Sources and Other Readings with Translation, Introduction, and Annotations by Prof. Dr. Manuk Abegyan. Yerevan, “Haypethrat” Press, 126 p. (in Armenian)]:

Հայ ժողովրդի պատմություն. 1971, հ. 1, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 991 էջ [History of the Armenian People, 1971, V. I. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 991 p. (in Armenian)]:

Հայ ժողովրդի պատմություն. 1984, հ. 2, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 691 էջ [History of the Armenian People, 1984, V. II. Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 691 p. (in Armenian)]:

Հայոց պատմություն. 2018, հ. II, Միջին դարեր (IV դար – XVII դարի առաջին կես), գիրք առաջին (IV դարի սկիզբ – VIII դարի կես), Երևան, «Զանգակ» հրատ., 704 էջ [History of Armenia, 2018, V. II, Middle Ages (4th century – first half of the 17th century), Book One (early 4th century – mid-8th century), Yerevan, “Zangak” Publishing House, 704 p. (in Armenian)]:

Հայոց պատմություն. 2024, հ. I (Հին քարի դար – Բ. հետո III դար), գիրք երկրորդ (Բ. ա. IX դար – Բ. հետո III դար), Երևան, «Զանգակ» հրատ., 696 էջ

[History of Armenia, 2024, Vol. I (Old Stone Age – 3rd century AD), Book Two (9th century BC – 3rd century AD). Yerevan, “Zangak” Publishing House, 696 p. (in Armenian)]:

Ղազարայ Փարպեցոյ Պատմութիւն Հայոց և Թուրթ առ Վահան Մամիկոնեան. 1904, աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան, Տիֆլիս, Մարտիրոսյանց տպարան, 211 էջ [Ghazar Parpetsi, History of the Armenians and Letter to Vahan Mamikonian. 1904, Compiled by G. Ter- Mkrtychyan and S. Malkhasyan, Tiflis, Martirosyants Publishing House, 211 p. (in Armenian)]:

Մանանդյան Հ. 1978, Երկեր, հ. Բ, Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատ., 647 էջ [Manandyan H. 1978, Collected Works, Vol. II. Yerevan, Publishing House of Academy of Sciences of the Armenian SSR, 647 p. (in Armenian)]:

Մովսէս Խորենացի. 1991, Պատմութիւն Հայոց, Քննական բնագիրը և Ներածութիւնը Մ. Աբեղեանի և Ա. Յարութիւնեանի, նմանահանութիւն, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երևան, Հայկական ԽՍՀ ԳԱ հրատ., 485 էջ [Movses Khorenatsi, 1991, History of Armenia, Edition of the Text and Introduction by M. Abegyan and S. Harutyunyan; Revised and Supplemented by A. B. Sargsyan, Yerevan, Publishing House of Academy of Sciences of the Armenian SSR, 485 p. (in Armenian)]:

Սարգիսեան Բ. 1890, Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքն, Վենետիկ, ի տպարանի սրբոյն Ղազարու, 416 էջ [Sargisyan B. 1890, Agathangelos and His Age-Old Secret. Venice, St. Lazarus Publishing House, 416 p. (in Armenian)]:

Սարգսյան Ա. 2019, Պետականութեան ռեսուրսը և արժեքային համակարգը՝ արտաքին քաղաքականությունը պայմանավորող գործոններ (մ. թ. ա. II – մ. թ. IV դդ.). – ՊԲՀ, № 2, էջ 231–251 [Sargsyan A., 2019, Statehood Capacity and Value System as Determining Factors in Foreign Policy (II c. BC – IV c. AD). – HPh], № 2, 231–251 p. (in Armenian)]:

Սարգսյան Ա. 2023, Հայ պատմագրութեան ուսումնասիրման քաղաքական դիտանկյան ներածական հարցեր. – Բանբեր Մատենադարանի, № 35, էջ 158–188 [Sargsyan A., 2023, Introductory Issues Related to the Study of Armenian Historiography from the Political Aspect. – Bulletin of the Matenadaran, № 35, 158–188 p. (in Armenian)]:

Սարգսյան Ա. 2024ա, Հայոց դարձի առաջին փուլը քաղաքական դիտանկյունից. – Բանբեր Մատենադարանի, № 37, էջ 37–58 [Sargsyan A., 2024a, The First Stage of the Conversion of the Armenians to Christianity: Political Aspect. – Bulletin of the Matenadaran, № 37, 37–58 p. (in Armenian)]:

Սարգսյան Ա. 2024բ, Հայոց դարձի երկրորդ փուլը. հիմնական քաղաքական օրակարգը սպասարկող Ծրագիր. – Բանբեր Մատենադարանի, № 38, էջ 48–73 [Sargsyan A., 2024b, The Second Phase of Christianisation of Armenia: A Program Serving the Fundamental Political Agenda. – Bulletin of the Matenadaran, № 38, 48–73 p. (in Armenian)]:

Սարգսյան Ա. 2025, Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» թվագրման հիմքերի շուրջ. – ՊԲՀ, № 3, էջ 3–24 [Sargsyan A., 2025, On the Issue of the Bases for Dating the “History of Armenia” by Agathangelos. – HPh], № 3, 3–24 p. (in Armenian)]:

Սարգսյան Գ. 1990, Հայոց գրական լեզվի նախնական փուլերը պատմաբանի հայացքով. – ՊԲՀ, № 4, էջ 22–30 [Sargsyan G., 1990, The Early Stages of the Armenian Literary Language from the Historian's Perspective. – HPH, № 4, 22–30 p. (in Armenian)]:

Տէր-Մովսիսեան Մ. 2018, Պատմութիւն Սուրբ Գրոց հայկական թարգմանութեան, ռուսերենից թարգմանեց Սուսաննա Նահապետեան, խմբագրեց և ծանոթագրեց Գէորգ Տէր-Վարդանեան, Էջմիածին, Մայր աթոռ սբ. Էջմիածնի հրատ., 320 էջ [Ter-Movsisian M., 2018, History of the Armenian Translation of the Holy Scriptures, Translated from Russian by Susanna Nahapetyan; Edited and Annotated by Gevorg Ter-Vardanyan. Etchmiadzin, Mother See of Holy Etchmiadzin Publishing House, 320 p. (in Armenian)]:

Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց, ի չորս դպրութիւնս. 1933, Վենետիկ, Տպարան սրբոյն Ղազարու, 295 էջ [Pavstos Buzand, History of Armenia, in Four Books. 1933, Venice, St. Lazarus Publishing House, 295 p. (in Armenian)]:

Փալստոս Բուզանդ. 1968, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի, Երևան, «Հայաստան» հրատ., 350 էջ [Pavstos Buzand, 1968, History of Armenia, Translation, Introduction and Annotations by Academician S. Malkhasyants. Yerevan, “Hayastan” Publishing House, 350 p. (in Armenian)]:

Саркисян Г. 1980, К предыстории армянской письменности. – Кавказ и Византия, 2. Ереван, с. 15–20 [Sarkisyan G., 1980, On the Prehistory of Armenian Writing. – Kavkaz i Vizantiya, № 2, Yerevan, 15–20 p. (in Russian)].

Советская историческая энциклопедия. 1961, т. 1. Москва, Государственное научное издательство «Советская энциклопедия», 1023 с. [Soviet Historical Encyclopedia, 1961, Vol. I. Moscow, State Scientific Publishing House “Soviet Encyclopedia”, 1023 p. (in Russian)].

Brown P., 2013, The Rise of Western Christendom, Triumph and Diversity, A. D. Tenth Anniversary Revised Edition 200–1000, Wiley Blackwel, 768 p.

## НАЦИОНАЛЬНО-РЕЛИГИОЗНАЯ СРЕДА И ПОЛИТИЧЕСКАЯ ЦЕЛЬ СОЗДАНИЯ «ИСТОРИИ АРМЕНИИ» АГАТАНГЕЛОСА

АШОТ САРГСЯН

Резюме

*Ключевые слова:* Агатангелос, «История Армении», политическая повестка, религиозная ситуация, национальная идентичность, военное сословие, власть церкви, перевод Библии.

На рубеже IV–V вв., оказавшись перед лицом возникших угроз, армянская политическая мысль сформулировала общенациональную повестку сохранения национальной государственной и духовной власти, признав средством

её решения полное и окончательное распространение христианства, превращение его в веру и стержень идентичности армян.

Историки V века представляют ситуацию распространения христианства в Армении как крайне безутешную, объясняя это отсутствием перевода Библии на армянский язык. В действительности существовали гораздо более серьезные препятствия, о которых историки умалчивают.

На протяжении почти шестисотлетней независимой государственности армянское общество характеризовалось рядом особенностей: 1) языковым единством, 2) общностью национальных верований и религии, 3) абсолютным преобладанием свободного населения, 4) исключительным почитанием воинского искусства, удельным весом и высоким авторитетом военного сословия в обществе. Такая система ценностей как основа национальной идентичности и образа мышления делала армянское общество непоколебимо традиционным, что являлось естественным и серьезным препятствием на пути укоренения новой религии.

Осознавая препятствующие объективные обстоятельства и опираясь на столетний опыт не столь результативной проповеди, армянские политические круги сочли перевод Библии (и другой религиозной литературы) недостаточным для достижения поставленной цели – утверждения христианства. С точки зрения национальной политической повестки дня, функциональная роль «Истории» Агатангелоса была первостепенной в программе преодоления препятствий, стоявших перед новой религией. По всей видимости, труд Агатангелоса был задуман до изобретения письменности и создан, по крайней мере, параллельно с переводом Библии, в начале V века.

*Ашот Саргсян – к. и. н., старший научный сотрудник отдела изучения армянских текстов V–XIV веков Института древних рукописей им. Месропа Маштоца (Матенадаран). Научные интересы: историография V–X веков, история армянской политической мысли, Карабахского движения. Автор 5 книг и 22 статей. ashot.sargssyan@gmail.com*

## NATIONAL-RELIGIOUS CONTEXT AND THE POLITICAL PURPOSE BEHIND THE CREATION OF “HISTORY OF ARMENIA” BY AGATHANGELOS

ASHOT SARGSYAN

### Summary

*Keywords: Agathangelos, “History of Armenia”, political agenda, religious situation, national identity, military estate, ecclesiastical authority, Bible translation.*

At the turn of the fourth and fifth centuries, confronted with emerging threats, Armenian political thought formed a nationwide agenda for preserving the national

